ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՔԵՅ'Ս ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-26/178 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Թայշան Սպորթս իքուիփմենթ ԿՈ ԼԹԴ	Թայշան	Սոկուտեյկի (Sokuteiki) ձյուդոյում հատուկ պլաստիկե կամ մետաղական չափիչ գործիք, որն օգտագործվում է մարզիկի մարզահագուստի (ձյուդոգի/կիմոնո) համապատասխանությունը Ձյուդոյի միջազգային ֆեդերացիայի (IJF) պաշտոնական կանոններին ստուգելու համար: Սարքը նախագծված է այնպես, որ մեկ գործիքով հնարավոր լինի կատարել բոլոր անհրաժեշտ չափումները՝ բաճկոնի, տաբատի, թևքերի երկարության, օձիքի հաստության և գոտու չափսերի ստուգում: Նյութը՝ Սովորաբար պատրաստվում է բարձրորակ, թեթև և դիմացկուն պլաստիկից կամ թեթև մետաղական համաձուլվածքից: Կառուցվածքը՝ Էրգոնոմիկ ձև, որը հարմարեցված է հագուստի տարբեր մասերին հպելու և արագ ստուգելու համար: Պաշտոնական չափիչ սարք, օգտագործվում է մրցումներից առաջ ստուգելու համար մարզիկների հագուստի՝ կիմանոյի և գոտու համապատասխանությունը կանոնակարգերին: Արտադրողներ՝ պաշտոնական սարքերը հիմնականում արտադրվում են IJF-ի կողմից լիցենզավորված: Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:

			Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, փորձարկումը և մեկ տարի ժամկետով սպասարկումը իրականացվում է Վաճառողի կողմից՝ Գնորդի կողմից նշված հասցեում: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օրը՝ հաշված գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Պայմանագրի կատարման փուլում նշված ապրանքի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը, ինչպես նաև ապրանքի արտադրողից կամ նրա լիազորված պաշտոնական ներկայացուցչից տրամադրված երաշխիքային նամակ (MAF կամ DAF), որը հստակ հաստատում է մասնակցի իրավասությունը տվյալ արտադրանքը մատակարարելու Հայաստանի Հանրապետություն և տեխնիկական աջակցություն ապահովելու վերաբերյալ: Լրակազմում ներառված մարզագույքը պետք է ունենա համապատասխանության սերտեֆիկատ Ձյուդոյի միջազգային ֆեդերացիայի (IJF) կողմից: Վաճառողը պարտավոր է տրամադրել արտադրողի կողմից տրված նամակ երաշխիքային և հետերաշխիքային սպասարկումը Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրողի կամ պաշտոնական ներկայացուցչի (դիստրիբյուտոր) կողմից իրականացնելու համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Кейс Груп в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/178 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
1			